ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

Աստղաձորի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԳՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/04 ծածկագրով գնանշման հարցման հայտերի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

գ. Աստղաձոր

22 մարտի 2018թ.
ժամը՝ 15[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Տ. Լևոնյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Ավետիսյան, Ռ. Մաթոսյան
Հանձնաժողովի քարտուղար Ա. Դավեյան
Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Գ. Գրիգորյան

1. Գնանշման հարցման միջոցով հայտերի բացման մասին

(Տ. Լևոնյան)

1. Հանձնաժողովի նախագահ (նիստը նախագահողը) Տ. Լևոնյանը հայտարարեց նիստը բացված լինելու մասին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց , որ *«ՄՊԻՏԱԿ ԲԱՋԵ» ՍՊԸ-ի* կողմից 20.03.2018թ. էլ. փոստով ուղարկվել է գրություն , որ մեր կողմից պահանջվող փաստաթուղթը նշված ժամկետում չի կարող ներկայացնել :

2. Հանձնաժողովը որոշեց , որ *ՄՊԻՏԱԿ ԲԱՋԵ» ՍՊԸ -ի* կողմից ներկայացրած հայտի փաստաթղթային մասում առկա է հրավերի պահանջներին անհամապատասխան հայտի ապահովում , ուստի նրա հայտը գնահատեց անբավարար և մերժեց , իսկ *«Շանթ-Սեյրան» ՍՊԸ -ի և «ԱԼ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ -ի* կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին բավարար:

Որոշումը ընդունվեց՝ կողմ -4 , դեմ- 0

3. Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկը հետևյալն է.
   - *«Շանթ-Սեյրան» ՍՊԸ -ի* կողմից գնային առաջարկն է 20100000 դր. /քսան միլիոն մեկ հարյուր հազար դրամ/:
   - *«ԱԼ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ -ի* կողմից գնային առաջարկն է 20250000 դր. /քսան միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ/:

4. Ներկայացված բավարար գնահատված հայտերի նվազագույն գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել *«Շանթ-Սեյրան» ՍՊԸ* կազմակերպությանը 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել *«ԱԼ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ* կազմակերպությանը :

Որոշումը ընդունվեց՝ կողմ -4 , դեմ- 0

5. Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (3 աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին

տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերի պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Որոշումը ընդունվեց՝ կողմ -4 , դեմ- 0

7. 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին ; ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձորի համայնքապետարանի վարչական շենքում , Արցախյան ազատամարտիկների 4 հասցում:

Որոշումը ընդունվեց՝ կողմ -4 , դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ _____ Տ. Լևոնյան

Հանձնաժողովի անդամ _____ Մ. Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ _____ Ռ. Մաթոսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար _____ Գ. Գրիգորյան

Քարտուղար _____ Ա. Դավեյան